

Կարաւանը կը քալէր ծարա՛ւ, անօ՛թի: Կը սաստկանար ամառնային կի-
զիչ տաքը հետզհետէ: Ծերերը, տկարներն ու հիւանդները աչնան հողմահար
տերեւներու նման կը թափէին հողին վրայ, ճամբաներու եղերքին: Բոլորին
միակ փափաքը, մեռնիլն է, յաւիտենական հանգիստը: Երկրի երեսին կարծես
ասոնք չունեցան ո՛չ մէկ հողածու ձեռք. թշնամի էր մարդը, նոյնիսկ թշնամի
էր բնութիւնը իր սաստիկ տոթով: Կիւրիւնի աղջիկները սեւ մուրով ծպտեր
էին իրենց դէմքերը, ծածկելու համար իրենց շնորհները, սակայն իրենց աչ-
քերը պահեր էին իրենց փայլը, կախարդական գրաւչութիւնը: Խեղճ մայրեր
ի՛նչ երազներով մեծցուցեր էին զանոնք, որոնք այսօր կ՛ծկուած, համր քայ-
լերով կը գլիմէին դէպի անծանօթը, դէպի անմարդկային չարչարանքն ու ող-
բերգութիւնը:

Երկիւղն ու սարսափը կար բոլորին քով: Ու կը քալէր կարաւանը անընդ-
մէջ: Կը հեւային, կ'իյնային, բայց կը քալէին կրկին: Մնացողը կը մնար, եւ
ոչ ոք կրնար օգնել անոր: Արիւն եւ կամք չէր մնացեր երակներու մէջ: Ոստի-
կանները հոս ու հոն կը դառնային իրենց որս փնտոելով: Բուժելիցի ոստիկան
մը կը դառնար աղջկան մը շուրջ: Կը նայէր հասկցնելով, իր նայուածքը եւ
վախ ե՛ւ ժպիտ կը պարտադրէր: Ու ժպտեցաւ աղջիկն ալ իր սարսափէն: Ի՞նչ
կրնար ընել: Գիտէր իր վախճանը շատերուն նման: Իր ժպիտին մէջ կար կար-
ծես կանխամտածուած բան, խորհուրդի մը ստուերը: Բուժելիցի ձիւտորը
կանգնեցաւ քովն ի վեր, քաշեց թեւէն, բարձրացուց իր ձիուն վրայ: Ի՞նչ
ընէր աղջիկը պոռար, կանչէր, որո՞ւն, ո՞վ պիտի կրնար հասնիլ իրեն, պաշտ-
պանել:

Հետաքրքիր աչքեր, ուժասպառ՝ բայց կը հետեւէին լուեկան երեւոյ-
թին: Ոչ ոք կ'անդրադառնար, դարձեր էր սովորական բան, ամէն երեւոյթ եւ
արարք: Եղան որ ըսին.

— Գետնին տակը անցնիս, մեր պատիւը փարայի մը ըրիր:

Մնացե՞ր էր պատիւ, մնացե՞ր էր արժանապատուութիւն աշխարհի վը-
րայ: Տիրապետողը հիմա կացինն էր, հրացանը, սուրերու հարուածը, անաս-
նային կիւրքը ջարդելու: Ի՞նչ ըներ տերեւի պէս դողացող աղջիկը: Ան տեղա-
ւորուեցաւ ձիուն վրայ արհամարհական նայուածք մը նետելով ոստիկանին:
Չիյնալու համար գրկեց անոր մէջքը: Ոստիկանը կը խայտար իր ձեռք ձգած
որսով: Կարաւանը կը շարունակէր իր ճամբան: Ամօթը իր գլուխը ցցեց: Դա-
ժան իրենց այդ կացութեան մէջ, բոլորին փափսուքը վերածուեցաւ ազմուկի.

— Աշխարհի վերջը մօտեցած էր, Աստուծոյ դատաստանին առջեւ հա-
շիւ պիտի տրուէր, Քրիստոսի մօտ պիտի երթային անոնք, որ այս տառա-
պանքին կ'ենթարկուէին, իսկ ձիուն վրայի աղտոտ էակը պիտի նետուէր գե-
հէնի կրակներուն մէջ:

Միայն Բուժելիցի ոստիկանը ինքզինքը կը կարծէր գրախտին մէջ: Ո՛չ
Աստուծոյ պէտք ունէր եւ ոչ ալ մարդոց: Ո՞վ գիտէր տեղը Աստուծոյ, ո՞ւր
էր Ան, այս ահաւոր դէպքերուն: Մոռցեր էր թերեւս երկրին տեղը, չհաւա-
սալով որ մարդը ինչե՛ր կրնայ ընել եւ ինչերո՛ւ ընդունակ է, իր ստեղծած
մարդը:

Ոստիկանը մոռցեր էր իր կարաւանը: Կոտորուելիք անմեղներու զանգը-
ւածը մեքենաբար կը յառաջանար դէպի գիւղ մը, որ արդէն տեսանելի էր:
Հոն պիտի վերջանար իր պարտականութիւնը, ուրիշ յափշտակչներու յանձ-

նելով կարաւանը: Եւ ի՛նչ ժամեր պիտի անցընէր իր որսին հետ: Ձիէն վար կախուած զոյգ մը երկաթները որ ոտքերն անցուցեր էր, աղջկան թողուց, որ հանգիստ նստի եւ մտերմանայ:

Գիւղին մօտենալու յոյսը՝ ջուրի կարօտն էր բոլորին մօտ: Ումպ մը ջուր, քիչ մը հանդիստ ընէին թերեւս: Բայց այդ ալ չձգեցին: Անապատի վերջաւորութեան կարաւանը առաջնորդեցին անտառէ մը ներս, որուն միւս ծայրը կը գտնուէր գիւղ: Ձի յուսալքուեցան: Քիչ մը յետոյ կը հասնինք գիւղ, քիչ մը ետք կ'ունենանք ջուր: Դանդաղած էր ընթացքը կարաւանին: Ծառերուն ստուերներն ու կանաչութիւնը շրջապատին, կարծես կը թարմացնէր իրենց յոգնաբեկ մարմնին անդամները: Կարծես շունչ կ'առնէին պահ մը:

Բայց յանկարծ անտառէն անցաւ պոռչտուքի մը սարսափազդու արձագանդը.

— Անէմ... անէմ... (մայրիկ, մայրիկ...)

Բուժելիցի ոստիկանն էր, որ կողէն երեք դաշոյնի հարուած էր ստացեր, այն դաշոյնով որ իր մէջքը կապուած էր:

— Օ՛իս, սատկիր շուն ըսին, կարաւանէն բոլորը:

Միւս կողմէն կին մը իր վստահութիւնը գտած կը պոռար յաղթական.—

— Ես ձեզի չըսի, թէ Կիւրիինէն վատեր չեն ելլեր:

Խեղճ աղջիկը իբր ջուր առեր էր ոստիկանին արիւնը եւ անոր դիակին առջեւ կը պարէր, խնդալով, երգելով՝

«Թապալա տէֆը ձեռք առի,

Ասօր էլսպերս կարգեմ կռ...»:

Համատարած, ծանր լուսթեան մը տակ կը հեւար կարաւանը: Սպանութեան լուրը հասեր էր գիւղը արագօրէն: Երկու ձիաւոր կը հասնին դէպքին վայրը: Ոստիկանին դիակը լաւ մը քննելէ ետք, թուղթի մը վրայ կը դրեն պատահած եղելութիւնը, աւելցնելով՝ «սպանուած հայերուն կողմէ»: Յետոյ կարաւանին դառնալով ձիաւոր յիսնապետը կը պոռայ.

— Յանուն փաթիլահին ու դրօշակին կ'երգնում ձեզ ձեռք չի դալցնել, եթէ մէջտեղ հանէք Իսմարիլի սպաննիչը, հակառակ պարագային պիտի սպաննուիք ամէնքդ, ամէնքդ... կը հասկնաք...:

Պատասխան չկար: Կար լուսթիւնը, միայն լուսթիւնը:

— Միայն տասը վայրկեան պայմանաժամ, վերջը դուք դիտէք...

Մէկէն ծառին ետեւէն դուրս վազեց, խաղալով եկաւ խեղճ այլ հպարտ աղջիկը երգելով.

«Թապալա տէֆը ձեռք առի,

Ասօր էլսպերս կարգեմ կռ...»:

— Դուն էիք Իսմայիլը սպաննողը:

— Այո՛, այո՛, ե՛ս... ե՛ս... եւ շարունակեց պարիւլ եւ երգել նոյն եղանակը նոյն բառերով:

— Ուրեմն ծառին կապեցէք սա ոճրագործը:

— Ձեզի ալ օր մը ծառին կը կապեն, պոռաց աղջիկը:

Կապեցին խեղճ աղջիկը հպարտ, ծառի մը:

— Կրա՛կ, գոչեց յիսնապետ ձիաւորը:

Աղջիկը անշնչացած էր:

— Վառեցէք, «դանճըխը»:

Հրամանը գործադրուեցաւ: Թանձր ծուխի սիւն մը անտառին մէջէն բարձրացաւ դէպի երկինք, դէպի Աստուծոյ դահլին առջեւ: Գահը թափուր էր: Կարաւանը քալեց թէ չքալեց, մարդ չիմացաւ: Լռութիւն մը կար համատարած:

Վ. ՀՈՎԱԿ

11. — ԲԵՐԱՑԻ ՓԱՓԿԱՍՈՒՆ ՕՐԻՈՐԴ ՄԸ
ՀԱՅ ԳՈՂԳՈԹԱՅԻ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Կ'արժէ՛ որ ճանչնանք զինքը, կրակի եւ արիւնի մկրտութիւնը տեսած եւ զգացած այդ քամբախտ օրիորդը, ՏէՐՏԵՐԵԱՆ ՄԱՐԻՆ: Ժպտուր սառած երեւոյթ մը ունի իր տմոյն դէմքին վրայ, որ կը խռովէ զքեզ, մինչ իր նայուածքը, տրտում, յողմած ու նուազուն, կարծես մոլորած է անցեալի մշուշին մէջ:

Մեզի էր անցած շարթու: Հետաքրքիր հարցումներէս անհանդիստ, կը պատմէր դրուագներ՝ ջարդի ու քսոսրի ցուցանքներէն:

Ասկէ 5 տարի առաջ, այն ինչ հասյեանէն ուսումնաւարտ եւ 17 դարուններ ողջունած աղջնակ Մարի կը նետուի դաւառի մէկ անկիւնը, Կիւրին, կրթական իր անդրանիկ առաքելութիւնը սկսելու: Հոն, «Ազգ. Հայուհեաց» վարժարանին իբր տեսչուհի՝ հազիւ ութամսեայ պաշտօնավարութիւն մը ունեցած, զուլումը ծայր կու տայ:

Կիւրին, Սերաստիոյ նահանգին այդ հայախօս, հայաշատ քաղաքը, մեր լուսահոգի Քասիմին շէն հայրենիքը՝ 1915-ի ամառնամուտին՝ թատր կը հանդիսանայ իսլամական սկիւրագործութեանց, եւ 2500 տնուոր հայ բնակչութենէն 90 առ 100-ը կը մատնուի հուրի եւ սուրի, առանց հաշուելու դեռ՝ շուրջի հայաբնակ դիւղերը, Ղարասարն ու Մանճըլըլը, նոյնպէս դարձմար:

Քաղքին Հայոց թաղերն էին Չախձորը, Խասպաղը, Ղարաթէփէն եւ Շուղուլը, իւրաքանչիւրն ունենալով իր ուրոյն դպրոցն ու եկեղեցին: Չախձորը մէջերնուն առենէն աղքատիկն ըլլալուն՝ Պոլսոյ «Ազգանուէր»ը փութացած էր նոյն հայնոցին մէջ կրթարան մը բանալ:

Ոչ եւս են հիմա, իր հարիւրաւոր սանուհիները: Վարդանեան Հայկուկ՝ Մարիի պաշտօնակից ուսուցչուհին, Տէր Զօրի անապատներուն մէջ մեռեր էր, եւ Մարաշի ձղըլեան Եղիսարեթ դեռ 2 ամսուան հարս գեղանի՝ Դամասկոսի արեւներուն տակ դացեր էր պտըտցնել իր կմախք մարմինը: Արցունքոտ պատմութիւն ծայրէ ի ծայր:

Առտու մը յանկարծ փոթորիկը կը պայթի: Կուսակցականք ժիւհողոյն կը ձերբակալուին եւ բանտ կը նետուին: Օրերով չարչարանք: Վարդան ձղըլեան, Եղիսարեթի ամուսինը, պարթեւ հասակով, աղուոր, կապտաչուի, քաղքին Հայութեան պարծանք այդ պատուական տղամարդը՝ խաղալիք դարձած է Քեամիլի, ոստիկան-զինուորներու այդ հրէշ պետին ձեռքը, «Ուզումս Վարդանա ուզումս պիւր տէյնէֆ կէքիլիմ...»(1): Երաշխիքը պէտք է տանիլ անտրտունջ, ոտոյիկեան համբերութեամբ մը: Մերկ ներբաններ կը ճաթոտին անխնայ հարուածներէն, եւ առտու մըն ալ Վարդան, Չուլճեան Չղօն եւ Ազարեան Գեղամ կը փոխադրուին իբր թէ Սվազ, բայց Կիւրինէն քանի մը ժամ հեռու, ձորի մը եզրին քաւելու հայ ծնած ըլլալու մեղքերնին:

(1) Երկայնահասակ վարդանիմ, երկայն գաւազամ մը բերէֆ...